

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է Հանրապետական գորակոչային հանձնաժողովի նիստին

23.04.2013



ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղի է ունեցել հանրապետական գորակոչային հանձնաժողովի նիստ՝ ՀՀ պաշտպանության նախարար, հանրապետական գորակոչային հանձնաժողովի նախագահ Սեյրան Օհանյանի նախագահությամբ: Նիստի ընթացքում ամփոփվել են 2012թ. աշնանային գորակոչի արդյունքները և քննարկվել 2013թ. գարնանային գորակոչի պլանավորման աշխատանքները: Նիստին ներկա են եղել շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարները, ՀՀ մարզպետները ՀՀ ԶՈՒ ԳՇ ղեկավար կազմը, վարչության պետեր, գորամասերի հրամանատարներ և զինծառայողներ, բժշկական հանձնաժողովների ներկայացուցիչներ: Նիստին մասնակցել է նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ, Վայոց ձորի մարզային գորակոչային հանձնաժողովի նախագահ Էդգար Ղազարյանը, մարզային գորակոչային հանձնաժողովի անդամներ, Վայոց ձորի մարզի դատախազը, Եղեգնաձորի և Վայքի զինվորական կոմիսարները